Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի՛ շրջանավարտներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական սիրով ողջունում եւ շնորհավորում ենք ձեզ դպրոցական ուսումնառության շրջանը ավարտելու փոնական առիթով եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լուսո Խորանի առջեւ աղոթում ենք առ Աստված, որ հանապազ առաջնորդի եւ շնորհազարդի ձեզ եւ դեպի բարի իրագործում առաջնորդի ազնիվ ու շիտակ ձեր հոգու ձգտումները, հույսերն ու նպատակները: Միշտ եւ ամենուր անբաժան ուղեկից ունեցեք Աստվածսիրությունը, եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը, որոնք կօգնեն ձեզ ճշմարիտն ու արդարն ընտրելու, ձեր կյանքը առատ արդյունքներով արգասավորելու:

Մաղթում ենք ձեզ երջանկություն եւ հաջողություններ՝ մեր ժողովրդին, մեր Սուրբ Եկեղեցուն եւ ազատ իր կյանքը կերտող մեր Հայրենիքին բարի ծառայության մեջ: Թող ձեր ձեռքերումներով, ձեր գործերով զորանան մեր ժողովրդի հույսերը, եւ պայծառանա մեր ապագան: Եւ թող Ամենախնամ Աստծո օրհնաբեր Աջը մշտապես հովանի լինի ձեզ:

Շնորհք, սէր եւ ապրուածային սրբարար զօրութիւնն Յարուցեալ Տեառն մերոյ եղիցին ընդ ձեզ ամենեսեան. Ամէն: